



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանին
Պատրիարքին Հայոց Երուսաղէմի
Եր ևսադէմ

Սրբազն Եղբայր,

Այսու վերստին կը պայծառանան մեր հոգիները քալոր եւ
մեր կեանքի ուղին, զի «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ
զմահ կոխեաց և յարութեամբ իւրավ մեզ զկեանս պարզեւեաց»:

Արարչազործ ու փրկարար այս մեծ աւետիսը, քոյ նոր
լոյս իշեցնէ մեր եկեղեցին եւ անոր սպասաւորմերուն վրայ եւ
զօրացնէ զմեզ բռյորս, որպէսզի սիրով միաբան կարողանանք
բազմարդիւն դարձնել մեր ձեռաց գործերը, յամրապնդում հո-
գեւոր կեանքի եւ ազգային միասնութեան մեր ժողովուրդի որ ի
Հայաստան եւ ի սփիւս աշխարհի:

Սուրբ յարութիւն շնորհներով, քոզ ամուր հաստատուին
արդարութիւնը եւ խաղաղութիւնը մարդկային աշխարհին մէջ
եւ քոզ անին մանաւանդ սէրն աւ, միութեան ոգին մեր ազգի զա-
ւակներուն կեանքէն ներս, մեր սուրբ եկեղեցւայ կամարներուն
ներքեւ:

Ցաւերժական Սուրբ Էջմիածնէն և Մեր պրտէն ընդունեցէք
շնորհաւորանք, Եղբայրական ողջոյն եւ Աստուածային օրինու-
թիւն՝ Զերդ Ամենապատուութեան, Զեր հաւատաւոր միաբանու-
թեան եւ համայն հաւատացեալ մեր ժողովուրդին,

Մնամք միշտ աղօքող առ Աստուած հարցն մերոց՝

ՎԱԶԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածնէն
18 Մարտ 1969